



Կարգապահական գործ թիվ ԿԳ-18109

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի 27 փետրվարի թիվ 58-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/34-Ա

**ՓԱՏԱԲԱՆ ՍԵՐՉԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Սարգսյանի կազմով քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Սերգեյ Մանուկյանին (արտոնագիր՝ 1921) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

18.05.2018թ. Պալատ է մուտքագրվել Մաջիդ Իսմայիլզադեհի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է, որ Դիմողը հանդիսանում է թիվ 12159918 քրեական գործով մեղադրյալ, կալանավորվել է և գտնվում է «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: Ի թիվս այլ դատավարական փաստաթղթերի Դիմողի պաշտպանին է տրամադրվել Դիմողի կնոջ՝ Նասրին Կարչեգանիի կողմից 21.02.2018թ. ժամը 18:45-ից 20:20-ին տրված ցուցմունքների հայերեն թարգմանությունը, որում Դիմողին վերագրվում են արարքներ, գործողություններ, որոնք Դիմողը չի կատարել: Ըստ Դիմողի՝ 21.02.2018թ.՝ ժամը 18:45-ից 20:20-ը Նասրի Կարչեգանիի հարցաքննությանը որպես նրա պաշտպան հանդես է եկել փաստաբան Սերգեյ Մանուկյանը: Այդ հարցաքննությանը Նասրի Կարչեգանին, ըստ Դիմողի, սուտ ցուցմունքներ է տվել՝ իրեն մեղադրելով ծանր հանցագործությունների մեջ: Դիմողի կնոջ՝ Նասրի Կարչեգանիի հարցաքննությունից հետո՝ 21.02.2018թ. ժամը 22:05-ից մինչև 22.02.2018թ. ժամը 01:01-ը, կասկածյալի կարգավիճակում Դիմողի հարցաքննության ժամանակ, ըստ Դիմողի, նրա պաշտպանը ևս եղել է փաստաբան Սերգեյ Մանուկյանը: Դիմողի պնդմամբ, Նասրի Կարչեգանիի պաշտպանը, օրենքի համաձայն, չէր կարող հանդես գալ նաև որպես իր պաշտպան, սակայն քննիչը, խախտելով օրենքը, Սերգեյ

Մանուկյանին նշանակել է որպես Դիմողի պաշտպան, իսկ Սերգեյ Մանուկյանն էլ, խախտելով օրենքը, մասնակցել է Դիմողի հարցաքննությանը, ինչի իրավունքը չուներ, քանի որ դա արգելված է օրենքով: Դիմողը տեղեկացրել է, որ այդ ժամանակ տեղյակ չէր, որ փաստաբան Սերգեյ Մանուկյանը հանդիսացել է նաև Նասրին Կարչեգանիի պաշտպանը, և որ Նասրին Կարչեգանին իր դեմ ցուցմունք է տվել: Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Սերգեյ Մանուկյանի արարքում փաստաբանի վարքագծի կանոնի խախտման փաստը:

Դիմողի դիմումը ներկայացվել է նրա պաշտպան Կարեն Մեժլումյանի կողմից, ով միջնորդել է նախաքննական գաղտնիք համարվող ցուցմունքները չհրապարակել և կարգապահական գործ հարուցելու դեպքում գործը քննել դռնփակ՝ դա պատճառաբանելով քրեական գործի նախաքննության ընթացքում գտնվելու հանգամանքով: Դիմողի փաստաբանը հայտնում է, որ իր տեղեկություններով փաստաբան Սերգեյ Մանուկյանը հանդիսանում է հանրային պաշտպան, և նույն գործով հանդիսացել է մեկ այլ անձի պաշտպան ևս:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.06.2018թ. թիվ 255-Ա/ԿԳ-18109 որոշմամբ փաստաբան Սերգեյ Մանուկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 20-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 3.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

27.06.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

21.06.2018թ. Պալատ է մուտքագրվել փաստաբան Սերգեյ Մանուկյանի բացատրությունը, որում հայտնվել է, որ Սերգեյ Մանուկյանը հանդիսանում է հանրային պաշտպան և թիվ 12159918 քրեական գործով հանդիսացել է կասկածյալ Նասրին Կարչեգանիի պաշտպանը: Որպես վերջինիս պաշտպան՝ Սերգեյ Մանուկյանը նրան պարզաբանել է իր իրավունքները և պարտականությունները, մասնավորապես, ցուցմունք չտալու իրավունքը, այդ թվում իր ամուսնու վերաբերյալ, սակայն Նասրին Կարչեգանին հրաժարվել է օգտվել իր այդ իրավունքից և տվել է ցուցմունքներ: Ինչ վերաբերում է Մաջիդ Էսմայիլզադեհի և Նասրին Կարչեգանիի շահերի հակասությանը, ապա Սերգեյ Մանուկյանի պնդմամբ՝ ըստ էության, Մաջիդ Էսմայիլզադեհը տվել է խոստովանական ցուցմունքներ և հաստատել է իր առնչությունը կատարված դեպքին, ինչով հաստատել է

կնոջ հայտնած տվյալները:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանող Սերգեյ Մանուկյանը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

27.07.2018թ. Պալատ է ներկայացվել վկա Հերոս Դիդարյանտի (**այսուհետ՝ նաև Վկա**) բացատրությունը, որում հայտնվել է, որ թիվ 12159918 քրեական գործով ներգրավված է եղել որպես թարգմանիչ: Գործով կասկածյալներ Նասրին Հասսանի Կարչեգանիի և Մաջիդ Սաֆարալի Էսմաեիլզադեի պաշտպանությունն իրականացրել է Պալատի ՀՊԳ փաստաբան Սերգեյ Մանուկյանը: Վկայի ներկայությամբ և վերջինիս թարգմանության միջոցով պաշտպան Մանուկյանը Նասրին Հասսանի Կարչեգանիին հարցաքննությունից առաջ պարզաբանել է իր իրավունքները, մասնավորապես, ցուցմունք չտալու իրավունքը և իր ամուսնու՝ Մաջիդ Սաֆարալի Էսմաեիլզադեի վերաբերյալ ցուցմունք չտալը, սակայն նա հրաժարվել է այդ իրավունքից օգտվել, ինչը նրա կողմից հավաստվել է համապատասխան գրությամբ: Մաջիդ Սաֆարալի Էսմաեիլզադեի հարցաքննությունից առաջ պաշտպան Մանուկյանն իր ներկայությամբ և իր թարգմանության միջոցով հայտնել է, որ հանդիսանում է նաև Էսմաեիլզադեի կնոջ պաշտպանը և պարզաբանել է նրան, թե ինչի մեջ է նա կասկածվում, նաև նրան հայտնել իր կնոջ ցուցմունքների բովանդակությունը, ներկա իրավիճակը, որի հետ Էսմաեիլզադեի համաձայնել է և իր տված ցուցմունքով ըստ էության հաստատել Նասրին Հասսանի Կարչեգանիի հայտնած տվյալները:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

27.08.2018թ. Նախապատրաստող Ստեփան Ոսկանյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՔԿ ԵՔԲՎ էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ. Ա. Ալեքսանյանի վարույթում քննվող թիվ 12159918 քրեական գործով որպես կասկածյալ, ապա՝ մեղադրյալ է ներգրավվել ԻԻՀ քաղաքացի, ազգությամբ իրանցի Մաջիդ Սաֆարալի Իսմայիլզադեն:

2. 21.02.2018թ. նշված քրեական գործով որպես կասկածյալ հարցաքննվել է Մաջիդ Իսմայիլզադեի կինը՝ Նասրին Կարչեգանին, ում հարցաքննությանը որպես վերջինիս շահերի պաշտպան մասնակցել է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Սերգեյ Մանուկյանը:

3. Համաձայն կասկածյալի հարցաքննության 21.02.2018թ. արձանագրության՝ Նասրին Կարչեգանիի հարցաքննությունը սկսվել է ժամը 18:45-ին և ավարտվել 20:20-ին, իսկ որպես թարգման մասնակցել է Հերոս Դիդարյանտը: Արձանագրության վերջում առկա են կասկածյալ Նասրին Կարչեգանիի թարգման Հերոս Դիդարյանտի պաշտպան Սերգեյ Մանուկյանի և ավագ քննիչ Մ. Ալեքսանյանի ստորագրությունները:

4. Նշված հարցաքննության արձանագրությունում նշված է, որ կասկածյալ Նասրին Կարչեգանիին պարզաբանվել է կասկածանքի էությունը, որպես կասկածյալ ցուցմունք

տալուց հրաժարվելու իր իրավունքը, սակայն Նասրին Կարչեգանին չի ցանկացել օգտվել իր իրավունքից, ինչն ամրագրվել է նաև վերջինիս կողմից պաշտպան Սերգեյ Մանուկյանին տրամադրված 21.02.2018թ. գրությամբ:

5. 21.02.2018թ. թիվ 12159918 քրեական գործով որպես կասկածյալ հարցաքննվել է նաև Մաջիդ Իսմայիլզադեն, ում հարցաքննության որպես վերջինիս շահերի պաշտպան նույնպես մասնակցել է Սերգեյ Մանուկյանը:

6. Համաձայն կասկածյալի հարցաքննության 21.02.2018թ. արձանագրության՝ Մաջիդ Իսմայիլզադեի հարցաքննությունը սկսվել է ժամը 22:05-ին և ավարտվել 01:01-ին, իսկ որպես թարգման մասնակցել է Հերոս Դիդարյանտը: Արձանագրության վերջում առկա են կասկածյալ Մաջիդ Իսմայիլզադեի թարգման Հերոս Դիդարյանտի, պաշտպան Սերգեյ Մանուկյանի և քննիչ Ս. Ռ. Նավասարդյանի ստորագրությունները:

7. 23.02.2018թ. Մաջիդ Իսմայիլզադեն ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔՕ) 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքները կատարելու համար: Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին, որը բավարարվել է դատարանի որոշմամբ:

8. Նախաքննության հետագա փուլում մեղադրյալ Մաջիդ Իսմայիլզադեի շահերի պաշտպանությունն իրականացրել է փաստաբան Կարեն Մեժլումյանը, ով Պալատի նախագահին հասցեագրված դիմումում խնդրել է չհրապարակել նախաքննական գաղտնիք համարվող ցուցմունքները՝ նկատի ունենալով, որ գործը դեռևս գտնվում է նախաքննության փուլում, իսկ կարգապահական գործ հարուցվելու դեպքում այն քննել դժնվակ:

9. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կալանքի տակ գտնվող Մաջիդ Իսմայիլզադեն իր պաշտպան Կարեն Մեժլումյանին տրամադրված դատավարական փաստաթղթերից, մասնավորապես, Մաջիդ Իսմայիլզադեի կնոջ՝ Նասրին Կարչեգանիի կողմից 21.02.2018թ. որպես կասկածյալ տրված ցուցմունքի հայերեն թարգմանության արձանագրությունից տեղեկացել է, որ իրեն վերագրվում են արարքներ, որոնք ինքը չի կատարել և նշված հարցաքննությանը որպես կասկածյալ Նասրին Կարչեգանիի պաշտպան հանդես եկած փաստաբան Սերգեյ Մանուկյանի մասնակցությամբ իր կինը թեկուզ սուտ, սակայն ուղղակի ցուցմունքներ է տվել իր դեմ՝ իրեն մեղադրելով ծանր հանցագործությունների մեջ:

Պատասխանողը 06.09.2018թ. Պալատ է ներկայացրել առարկություն եզրակացության վերաբերյալ, որում հայտնել է, որ ինքը հանդիսանում է նաև Դիմողի կնոջ պաշտպանը, հայտնել է նաև իր կնոջ կողմից տրված ցուցմունքների բովանդակությունը: Դիմողը Պատասխանողի հետ առանձնատեսակցության ժամանակ և իր ցուցմունքներով ընդունել է այն արարքները, որոնց վերաբերյալ ցուցմունք է տվել Դիմողի կինը: Վերը նշվածի իսկությունը հաստատվել է տվյալ հարցաքննություններին և առանձնագրույցին գտնվող թարգման Հերոս Դիդարյանտի տված բացատրություններով: Պատասխանողը գտնում է, որ Նախապատրաստողի եզրակացության 7-րդ կետի 9-րդ ենթակետով հաստատված Դիմողի պնդումները հիմնավոր չեն և խնդրում է հիմք ընդունել և հաստատված համարել իր կողմից նշված հանգամանքները: Պատասխանողը հայտնել է նաև, որ համաձայն չէ Նախապատրաստողի այն հարցադրման հետ, որ իր

մասնակցության ժամանակ Դիմողի և նրա կնոջ շահերի միջև եղել է հակասություն, ինչի վերաբերյալ Պատասխանողը և վկա Հերոս Դիդարյանտը ներկայացրել են համապատասխան փաստարկներ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.08.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 19:3-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Սերգեյ Մանուկյանը թիվ 12159918 քրեական գործով հանդիսացել է կասկածյալ Նասրին Հասսանի Կարչեգանիի պաշտպանը: Նասրին Կարչեգանիի հարցաքննությունը սկսվել է 21.02.2018թ. ժամը 18:45-ին և ավարտվել 20:20-ին, իսկ որպես թարգմանիչ մասնակցել է Հերոս Դիդարյանտը: Արձանագրության վերջում առկա են կասկածյալ Նասրին Կարչեգանիի թարգմանիչ Հերոս Դիդարյանտի, պաշտպան Սերգեյ Մանուկյանի և ավագ քննիչ Մ. Ալեքսանյանի ստորագրությունները:

2. Փաստաբան Սերգեյ Մանուկյանը Նասրին Կարչեգանիին պարզաբանել է կասկածանքի էությունը, որպես կասկածյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իր իրավունքը, սակայն Նասրին Կարչեգանին չի ցանկացել օգտվել իր իրավունքից:

3. 21.02.2018թ. թիվ 12159918 քրեական գործով որպես կասկածյալ հարցաքննվել է նաև Մաջիդ Իսմայիլզադեն, ում հարցաքննության որպես վերջինիս շահերի պաշտպան նույնպես մասնակցել է Սերգեյ Մանուկյանը: Մաջիդ Իսմայիլզադեի հարցաքննությունը սկսվել է ժամը 22:05-ին և ավարտվել 01:01-ին, իսկ որպես թարգմանիչ մասնակցել է Հերոս Դիդարյանտը: Արձանագրության վերջում առկա են կասկածյալ Մաջիդ Իսմայիլզադեի թարգման Հերոս Դիդարյանտի, պաշտպան Սերգեյ Մանուկյանի և քննիչ Ս. Ռ. Նավասարդյանի ստորագրությունները:

4. Վկայի ներկայությամբ և վերջինիս թարգմանության միջոցով պաշտպան Սերգեյ Մանուկյանը Նասրին Հասսանի Կարչեգանիին հարցաքննությունից առաջ պարզաբանել է իր իրավունքները, մասնավորապես, ցուցմունք չտալու իրավունքը և իր ամուսնու՝ Մաջիդ Սաֆարալի Էսմաեիլզադեի վերաբերյալ ցուցմունք չտալը, սակայն նա հրաժարվել է այդ իրավունքից օգտվել, ինչը նրա կողմից հավաստվել է համապատասխան գրությամբ: Մաջիդ Սաֆարալի Էսմաեիլզադեի հարցաքննությունից առաջ պաշտպան Մանուկյանն թարգմանչի ներկայությամբ և թարգմանության միջոցով հայտնել է, որ հանդիսանում է նաև Էսմաեիլզադեի կնոջ պաշտպանը և պարզաբանել է նրան, թե ինչի մեջ է նա

կասկածվում, նաև նրան հայտնել իր կինը իր դեմ ցուցմունքների բովանդակությունը, ներկա իրավիճակը, որի հետ էսմանելիզադեհը համաձայնել է և իր տված ցուցմունքով ըստ էության հաստատել Նասրին Հասսանի Կարչեգանիի հայտնած տվյալները:

Նշված փաստերը հաստատվում է գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ և առարկությամբ, Վկայի բացատրությամբ, կասկածյալների հարցաքննությունների 21.02.2018թ. արձանագրությունների պատճեններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Սերգեյ Մանուկյանը փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ., և 2015-2019թթ. Սերգեյ Մանուկյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սերգեյ Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթ ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փաստաբանը պետք է դադարեցնի իրավաբանական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի անձանց, եթե նրանց շահերի միջև առաջանում է հակասություն:

Կանոնագրի 3.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում) (...):

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը, լինելով իրավապաշտպան և արդարադատության իրականացմանը նպաստող սուբյեկտ, ունի հատուկ կարգավիճակ և առաքելություն, այն է՝ ներկայացնել և պաշտպանել իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենքով չարգելված բոլոր հասանելի միջոցներով՝ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ նպաստելով պետության հնարավոր կամայականություններից մարդու արժանապատվության և իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ձևավորմանը և գործողությանը, ինչպես նաև աջակցելով դատական իշխանությանը պատշաճորեն իրականացնել արդարադատության գործառույթը:

Փաստաբանի նշված գործառույթների պատշաճ և արդյունավետ իրականացման նախապայմանը վստահորդի շահերի բարեխիղճ պաշտպանությունն է, այսինքն՝ փաստաբանից կախված բոլոր օրինական գործողությունների իրականացումը՝ ի շահ վստահորդի և նրա իրավունքների պաշտպանության: Վստահորդի բարեխիղճ ներկայացուցչությունը ենթադրում է փաստաբանի և վստահորդի փոխվստահության

հարաբերությունների առկայություն, որոնք կարող են գործել միայն այն դեպքում, եթե փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ չեն առնվում: Փաստաբանի համար այս ավանդական արժեքները մասնագիտական պարտավորություններ են:

Փաստաբանի մասնագիտական բարեխղճության հիմնարար պարտականությանը հակասում է, երբ փաստաբանն ստանձնում և (կամ) իրացնում է նույն գործով երկու վստահորդի շահերի պաշտպանություն, ովքեր ունեն շահերի հակասություն, և առկա չէ վստահորդների կամավոր համաձայնությունը փաստաբանին նման լիազորություններ վերագրելու հարցում: Նման պայմաններում փաստաբանը չի կարող իրականացնել օրենքով չարգելված բոլոր միջոցներով վստահորդի շահերի պաշտպանության իր գործառույթը, որը նախատեսված է նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ երկու հակադիր շահերով անձանց շահերի պաշտպանությունն անխուսափելիորեն կհանգեցնի փաստաբանի անկախության սահմանափակմանը և երկու վստահորդի շահերի թերի պաշտպանությանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ ենթադրյալ շահերի հակասության յուրաքանչյուր դեպք գնահատելիս պետք է իրականացնել գործի հանգամանքների բազմակողմանի քննարկում՝ ոչ միայն հաշվի առնելով փաստաբանի և վստահորդների հարաբերությունների ձևական իրավաչափության գնահատման անհրաժեշտությունը, այլև այդ հարաբերություններին տալով ըստ էության իրավական գնահատական: Մասնավորապես, նույն քրեական գործով որպես կասկածյալ անցնող վստահորդների միջև շահերի հակասությունը որոշելու համար հարկավոր է պարզել այդ վստահորդների դատավարական կարգավիճակը, գործով արդեն իսկ ձեռք բերված ապացույցների շրջանակներում ենթադրյալ հանցագործությանը վստահորդների մասնակցության ենթադրյալ բնույթն ու չափը՝ ներառյալ հանցագործության կատարմանը նրանց կամ նրանցից մեկի մասնակցությունը հիմնավորապես ժխտելու հնարավորությունը, կասկածյալների փոխհարաբերությունների բնույթը, նրանց դատավարական շահերի ընդհանրությունը կամ հակասությունը, վստահորդների կողմից փաստաբանին տրված հանձնարարության բնույթը և բովանդակությունը և այլ վերաբերելի հանգամանքներ:

Տվյալ պարագայում Խորհուրդն ապացուցված է համարում, որ Պատասխանողը, նախ՝ ստանձնել է գործով կասկածյալ Նասրին Հասսանի Կարչեգանիի շահերի պաշտպանությունը, իսկ այնուհետև՝ սկսել է իրականացնել նաև Դիմողի շահերի պաշտպանությունը, ով նույն գործով ևս ուներ կասկածյալի դատավարական կարգավիճակ:

Գործի նյութերից և, մասնավորապես, Պատասխանողի բացատրությունից և Վկա՝ Դիմողի և Դիմողի կնոջ մասնակցությամբ քրեական գործով թարգմանչի, ցուցմունքից հետևում է, որ Նասրին Հասսանի Կարչեգանին տվել է ցուցմունք իր ամուսնու՝ Դիմողի դեմ՝ վերջինիս մեղադրելով հանցագործության կատարման մեջ, որից հետո Պատասխանողը, ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, վերջինիս տեղեկացրել է, որ հանդիսանում է նաև նույն գործով անցնող Դիմողի կնոջ պաշտպանը: Դիմողն իր ցուցմունքում համաձայնվել է իր կնոջ ցուցմունքում հայտնած տեղեկատվության հետ առ այն, որ ինքը կատարել է իրեն մեղսագրվող հանցագործությունը, իսկ Պատասխանողի կողմից իր կնոջ պաշտպանությունն

իրականացնելու հանգամանքի դեմ չի առարկել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ թեև Դիմողի կինը նրա դեմ ցուցմունք է տվել, սակայն դա բավարար չէ նրանց շահերի հակասության փաստը հաստատված համարելու համար, քանի որ Դիմողը հետագայում իր ցուցմունքում հաստատել է, իր կնոջ կողմից հայտնած տեղեկատվության իսկությունը և փաստացի տվել է ինքնախոստովական ցուցմունք: Հետևաբար, առնվազն այդ պահին շահերի հակասություն չի եղել և փաստաբանն էլ այդ պարագայում չէր կարող շահերի հակասության հիմքով իր վարքագիծը փոխել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Սերգեյ Մանուկյանի վարքագծում կարգապահական խախտման հատկանիշները բացակայում են:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սերգեյ Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 1921) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող

Կարապետ Աղաջանյան

27 փետրվարի 2019թ.
թիվ ԿԳ/34-Ա
ք. Երևան